ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

փաստաբան Բակուր Օհանյանի և նրա վստահորդների միջև հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու անթույլատրելիության վերաբերյալ

ք.Երևան **20.05.2021թ.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը **(այսուհետ՝ Հանձնաժողով)**՝ համակարգող Գևորգ Մկրտչյանի և անդամներ՝ Արմինե Ֆանյանի, Արսեն Մկրտչյանի, Արմեն Ֆերոյանի կազմով,

մասնակցությամբ փաստաբան Բակուր Օհանյանի,

ուսումնասիրելով փաստաբան Բակուր Օհանյանի կողմից ներկայացված դիմումը՝ իր և իր վստահորդների հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ՝

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խաչատրյանն իր վարույթում գտնվող թիվ 55101821 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու նպատակով, 2021 թվականի մայիսի 03-ին, գործով պաշտպան՝ Բակուր Օհանյանին և վերջինիս պաշտպանյալ՝ Արամո Ավետյանին հայտնել է նախաքննության ավարտի մասին և տրամադրել քրեական գործի նյութերի պատճենները՝ ծանոթացման նպատակով:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա.Հարությունյանի կողմից, Թումանյանի քննչական բաժնի պետին հասցեագրած 13.05.2020թ. թիվ 58/2-2564 գրությանը կից տրամադրվել են՝ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված, թվով 713 թերթ ամփոփագրեր և ձայնագրառումներ պարունակող՝ թվով 3 լազերային սկավառակներ:

Նշված ամփոփագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցից 22-ը վերաբերում են՝ փաստաբան, գործով պաշտպան՝ Բակուր Օհանյանին պատկանող 095-66-55-33 բջջային հեռախոսահամարի գաղտնալսումներին:

Ամփոփագրերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ հեռախոսային խոսակցությունների գերակշիռ մասը վերաբերում են՝ Բակուր Օհանյանի և այլ

քրեական գործերով վերջինիս պաշտպանյալների ունեցած հաղորդակցությանը, որոնք այլ քրեական գործերով հանդիսանում են փաստաբանական գաղտնիք պարունակող տվյալներ:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ քրեական գործում առկա չէ դատարանի համապատասխան որոշում՝ Բակուր Օհանյանին պատկանող 095-66-55-33 բջջային հեռախոսահամարի գաղտնալսումը թույլատրելու վերաբերյալ:

2021 թվականի մարտի 10-ին փաստաբան Բակուր Օհանյանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է միջնորդություն՝ խնդրելով թիվ 55100520 քրեական գործով նախաքննությունը վերսկսել և ի թիվս այլնի՝ վերականգնել իր և պաշտպանյալի խախտված իրավունքները՝ քրեական գործի նյութերից անհապաղ ոչնչացնելով իրեն պատկանող 095-66-55-33 բջջային հեռախոսահամարի գաղտնալսման արդյունքները:

2021 թվականի մայիսի 10-ին քննիչ Ս.Դանիելյանը քննության առնելով Բակուր Օհանյանի միջնորդությունը մերժել է այն հետևյալ պատճառաբանությամբ. *«Քրեական գործի ընթացքում Ձեր և մեղադրյալ Արամո Ավետյանի իրավունքները չեն խախտվել, քանի որ պաշտպանի կողմից օգտագործվող 095-66-55-33 հեռախոսահամարի խոսակցությունների գաղտնալսման միջնորդություն ինչպես հետաքննության մարմնի այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի ներկայացվել, այլ դատարանի կողմից թույլատրվել է գաղտնալսել Արամո Ավետյանի և քրեական գործի համար հնարավոր նշանակություն ունեցող անձանց կողմից օգտագործվող հեռախոսահամարները, որոնց ընթացքում, իհարկե, գաղտնալսվել են մեղադրյալ Արամո Ավետյանի հեռախոսահամարները, ինչի ընթացքում Ձեր հետ վերջինս նույնպես ունեցել է հեռախոսային խոսակցություն, որոնք սակայն, չեն գաղտնազերծվել, ուստի նախաքննության ընթացքում կարիք չի եղել առնչվել փաստաբանական գաղտնիք պարունակող որևէ գաղտնալսման հետ և այն ոչնչացնել»*:

2021 թվականի մայիսի 13-ին Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ռ.Մինասյանը որոշում է կայացրել՝ *պաշտպանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին և հանձնարարել վարույթն իրականացնող մարմնին անհապաղ ոչնչացնել Բակուր Օհանյանին պատկանող 095-66-55-33 բջջային հեռախոսահամարի գաղտնալսման արդյունքները*:

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման,

հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

3. Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ պետական մարմիններում և հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ դատական մարմիններում: Պետական և դատական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովելու փաստաբանի՝ վստահորդի հետ առանձին, անարգել և մեկուսի հաղորդակցվելու իրավունքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

(…)

5. Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ և տարածվում է նաև փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված կամ դադարեցված անձի նկատմամբ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

(…)

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

(...)

7. Արգելվում է անցկացնել սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և **12-րդ կետերով** նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, **հաղորդակցվում է իր փաստաբանի հետ:** Անհապաղ ոչնչացման են ենթակա սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և **12-րդ կետերով** նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված **փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները**:

Վերոգրյալից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է փաստաբանի և վստահորդի հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու բացարձակ արգելք, չսահմանելով դրանից շեղվելու որևէ հնարավորություն:

Նշված նորմերը կոչված են երաշխավորելու փաստաբանների անկաշկանդ գործունեությունը, ինչպես նաև վստահորդների հետ հաղորդակցության գաղտնի բնույթը՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:

Փաստաբանական անկաշկանդ գործունեության երաշխիք է նաև այն, որ նույնիսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններն անհապաղ ենթակա են ոչնչացման՝ անկախ խոսակցություններում պարունակվող տեղեկությունների արժեքավորությունից:

Ավելին, փաստաբանական գաղտնիքի պաշտպանությունը երաշխավորվում է ոչ միայն ներպետական օրենսդրությամբ, այլև միջազգային պայմանագրերով, որոնք կազմում են ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

Այսպիսով, 1990թ. սեպտեմբերի 7-ին ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման եւ իրավախախտների հետ վարվելու ութերորդ Կոնգրեսի ընդունած ***«Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներում»*** տեղ գտած 22-րդ կետի համաձայն. *Կառավարությունները ընդունում և ապահովում են իրավաբանների և նրանց հաճախորդների ցանկացած հարաբերությունների ու խորհրդատվությունների գաղտնի բնույթը՝ նրանց մասնագիտական առնչությունների շրջանակներում:*

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի **«Իրավաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին»** թիվ 21 հանձնարարականում սահմանվել են մի շարք հիմնարար ընդհանուր դրույթներ: Այդ թվում այն, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները, որպեսզի փաստաբանները կարողանան իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնել առանց խտրականության և առանց խոչընդոտների, ինչպես հանրության, այնպես էլ իշխանությունների կողմից:

Նշված հարցին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նշելով որ Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի **(այսուհետ՝ ՄԻԵԿ)** 8-րդ

հոդվածը, պաշտպանելով ցանկացած հաղորդակցման գաղտնիությունը, ավելի բարձր պաշտպանություն է տրամադրում փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններին:

Այդպիսի պաշտպանությունը պայմանավորված է ժողովրդավարական պետությունում դատավարական գործընթացում կողմի ներկայացման փաստաբանի հիմնարար դերակատարման ճանաչմամբ: Գաղտնիության պահպանությունից անուղղակիորեն կախված է նաև արդար դատաքննության իրավունքի իրականացումը, այդ թվում՝ **իր դեմ չվկայելու մեղադրյալների իրավունքը:**

ՄԻԵԿ 8-րդ հոդվածով սահմանված փաստաբան-վստահորդ հարաբերություններում հաղորդակցման գաղտնիության լրացուցիչ պաշտպանությունը, ինչպես նաև այն դրույթները, որոնց վրա այն հիմնված է, թույլ են տալիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանին եզրակացնել, որ այդ տեսանկյունից փաստաբանական գաղտնիքը, փաստաբանի համար նախատեսելով որոշակի պարտականություններ, վերը նշված հոդվածի համատեքստում ենթակա է հատուկ պաշտպանության (**տե՛ս Միշոն ընդդեմ Ֆրանսիայի (Michaud v. France), 2012թ-ի դեկտեմբերի 6-ի որոշում, §§ 118–19), Պրուտեանուն ընդդեմ Ռումինիայի (Pruteanu v. Romania), 2015թ-ի փետրվարի 3-ի որոշում**):

Դուդչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արձանագրել է ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը գաղտնալսել է դիմումատուի և իր փաստաբանի խոսակցությունը, իսկ դիմումատուն չի ունեցել դա վիճարկելու և ձայնագրությունը ոչնչացնելու արդյունավետ իրավական միջոց:

Մասնավորապես, Դատարանը նշել է, որ փաստաբանի և վստահորդի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը, անխուսափելիորեն հանգեցնում է նրանց՝ վստահության վրա հիմնված հարաբերությունների հիմքը կազմող փաստաբանական գաղտնիքի խախտմանը:

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ ՌԴ օրենսդրությունը նախատեսում է փաստաբանական գաղտնիքի պահպանություն և փաստաբանական գաղտնիքի տարածվում է այն բոլոր տեղեկությունների վրա, որոնք հայտնի են դարձել փաստաբանին իրավաբանական օգնություն ցուցաբերելիս: Դրա հետ մեկտեղ օրենսդրությամբ նախատեսված չեն փաստաբանի հետ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման մասով հատուկ երաշխիքներ: Եվ այդ խոսակցությունը գաղտնալսվում է նույն եղանակով, ինչպես այլ խոսակցություններ (**տես՝ Ռոման Զախարովը ընդդեմ Ռուսաստանի (Roman Zakharov v. Russia) գործով ՄԻԵԴ-ի 04.12.2015թ.-ի որոշում, §§ 302-04, գանգատ թիվ 47143/06**):

Դատարանը հանգել է նման եզրակացության, նույնիսկ այն դեպքում, երբ ՌԴ օրենսդրությամբ նախատեսված չեն երաշխիքներ այն դեպքերի համար, երբ գաղտնալսման ընթացքում իշխանությունները պատահական ձայնագրում են փաստաբանի և վստահորդի միջև խոսակցություն (**համեմատության համար տես «Ռ.Ե.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Եվրոպական դատարանի որոշումը գանգատ թիվ 62498/11, 27.10.2015թ.**):

Արդյունքում, ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ ՌԴ օրենսդրությունը որևէ երաշխիք չի նախատեսում պաշտպանվելու համար այնպիսի չարաշահումներից, երբ փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունները իշխանություններին հայտնի

են դառնում գաղտնալսման ընթացքում, ինչը չի համապատասխանում «օրենքի որակի» վերաբերյալ Կոնվենցիայի չափանիշներին:

Վերոգրյալի հիման վրա արձանագրվել է, որ դիմումատուին գաղտնալսելու ընթացքում թույլ է տրվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում (տես՝ Դուդչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով (Dudchenko v. Russi) գործով ՄԻԵԴ-ի 07.11.2017թ.-ի որոշում, §§ 108-11, գանգատ թիվ 37717/05):

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն այլ գործերով նաև նշել է, որ փաստաբանական գաղտնիքի պահպանումն *«առանձնահատուկ կշիռ է հաղորդում»* իրավաբանի մասնագիտական գաղտնիության նկատմամբ ոտնձգության վտանգին, ***«քանի որ դա կարող է հետևանքներ ունենալ արդարադատության պատշաճ իրականացման վրա» (տե՛ս վերը՝ Վեստեր և Բիկոս, կետեր 65 և 66, տե՛ս վերը՝ Նեմեց, կետ 37, և Անդրե կետ 41)*** **և մասնագիտական գաղտնիությունը հիմքն է փաստաբանի և հաճախորդի միջև վստահելի հարաբերությունների** *(տե՛ս վերը՝ Անդրե, կետ 41, և Խավիեր Դա Սիլվիերա, կետ 36):* Արդյունքում, քանի որ 8-րդ հոդվածը պաշտպանում է անհատների միջև բոլոր տեսակի *«նամակագրության»* գաղտնիությունը, **այն ավելի ուժեղ պաշտպանություն է տրամադրում փաստաբանների և իրենց հաճախորդների միջև գրագրությանը: Սա արդարացված է այն փաստով, որ փաստաբանները հիմնարար դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում, այն է՝ դատավարության կողմերին պաշտպանելը:** Բացի այդ փաստաբանները չեն կարող իրականացնել այս կարևորագույն առաջադրանքը, եթե չկարողանան երաշխավորել իրենց պաշտպանյալներին, որ իրենց միջև տեղեկատվության փոխանակությունը կմնա գաղտնի: Դա վստահության վրա հիմնված հարաբերությունն է նրանց միջև, որը էական է այդ առաքելության իրականացման համար, և որ վտանգի է ենթարկված: Անուղղակիորեն, բայց անխուսափելի կախված է դրանից բոլորի՝ արդար դատաքննության իրավունքը, ներառյալ մեղադրյալների՝ իրենք իրենց չմեղսագրելու իրավունքը: Այս լրացուցիչ պաշտպանությունը, որ շնորհում է 8-րդ հոդվածը իրավաբան-հաճախորդ հարաբերությունների գաղտնիությանը, և որի վրա այն հիմնված է, Դատարանի մոտ համոզմունք է ծնում, որ այս տեսանկյունից, իրավական մասնագիտական գաղտնիքը պահելու արտոնությունը առանձնահատուկ կերպով պաշտպանված է այդ հոդվածով:

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավակարգավորումների համաձայն, ինչպես նաև ձևավորված միջազգային դատական պրակտիկայի պայմաններում ակնհայտ է, որ փաստաբանական գաղտնիքով պաշտպանված է փաստաբանի և վստահորդի միջև տեղի ունեցած ցանկացած խոսակցություն, որը վերաբերում է իրավաբանական օգնություն տրամադրելուն:

Ավելին, վերը նշվածից պարզ է դառնում նաև, որ հաշվի առնելով փաստաբանի դերն ու նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում՝ փաստաբան-վստահորդ հարաբերություններում հաղորդակցման գաղտնիությունը պետք է երաշխավորված լինի լրացուցիչ պաշտպանությամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով փաստաբան Բակուր Օհանյանի՝ Հանձնաժողովին ներկայացրած նյութերը, լսելով վերջինիս բացատրությունները, դրանք վերլուծելով միջազգային և ներպետական իրավակարգավորումների լույսի

ներքո, ինչպես նաև ղեկավարվելով «Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության» Կարգի 2.13 և 2.14 կետերով,

Հանձնաժողովը որոշեց՝

- ***<u>ՀԱՅՏԱՐԱՐԵԼ</u>.***

առանց սահմանադրաիրավական երաշխիքների (դատարանի որոշման բացակայության պայմաններում) հեռախոսային խոսակցությունների վերահսկումը և ձայնագրառումը մարդու հիմնարար իրավունքի՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի խախտում է:

Քրեական հետապնդման մարմինների կողմից փաստաբան, թիվ 55101821 քրեական գործով պաշտպան Բակուր Օհանյանի հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու, դրանք հետազոտման առարկա դարձնելու, քրեական գործին կցելու և դատավարության այլ մասնակիցներին հասանելի դարձնելու մասով իրականացված գործողություններն ապօրինի են և չեն բխում ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական իրավակարգավորումներից:

- ***<u>ԴԱՏԱՊԱՐՏԵԼ.</u>***

ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի և ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից փաստաբանական գաղտնիքը խախտելուն ուղղված գործողությունները, ինչպես նաև քննիչ Ս.Դանիելյանի՝ գաղտնալսման արդյունքները ոչնչացնելուց հրաժարվելը:

- ***<u>ՀՈՐԴՈՐՈՐԵԼ</u>.***

իրավասու ՀՀ պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց.

զերծ մնալ առանց դատարանի որոշման՝ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունքը խախտելուն ուղղված գործողությունների կատարումից:

Իրավական գնահատական տալ, ինչպես՝ առանց դատարանի որոշման համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացրած, այնպես էլ՝ փաստաբանի և վերջինիս վստահորդի (վստահորդների) միջև հեռախոսային խոսակցություններն ապօրինի գաղտնալսած պաշտոնատար անձանց գործողություններին:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով

20.05.2021թ.
թիվ 01-Ա
ք.Երևան